



Համառոտագիր 26

Հունիս 2013

Պետական Գնումներ

Պետական գնումների առանցքային գործառույթների կազմակերպում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- [Ինչու՞ է անհրաժեշտ կազմակերպական կառուցվածքը՝ պետական գնումների գործառույթների հրականացման համար](#)
- [Պետական գնումների հիմնական առանցքային գործառույթները](#)
- [Ի՞նչ կազմակերպական մոդելներ գոյություն ունեն](#)
- [Պետական գնումների կենտրոնական մարմնի վարչական կարողությունները](#)
- [Պետական գնումների կենտրոնական մարմնի կողմից հրականացվող գործառույթների դրական և բացասական կողմերը](#)
- [Հետագա քննարկումներ](#)

Թույլատրված է տպագրության Կարեն Հիլի կողմից, SIGMA ծրագրի ղեկավար



Սույն Համառոտագիրը վերլուծում է ԵՄ Անդամ երկրների պետական գնումների առանցքային մարմինների գործառույթները, կառուցվածքը, կարգավիճակը կառավարությունում և կարողությունները: Այս վերլուծությունը կարող է հատկապես օգտակար լինել ԵՄ թեկնածու երկրների և ԵՄ փորձին համապատասխան պետական գնումների համակարգերը բարեփոխող այլ երկրների ազգային մարմինների ընտրված ներկայացուցիչների, քաղաքականություն որոշողների և որոշումներ կայացնողների համար: Այս երկրները քննարկում են կառույցների հիմնման, ուժեղացման կամ վերակազմակերպման հարցը՝ պետական գնումների համակարգի հետ կապված գործառույթների իրականացման նպատակով: Սույն Համառոտագիրը չի փորձում խորհուրդ տալ որևէ հատուկ ինստիտուցիոնալ կառուցվածք: ԵՄ-ում առկա զանազան մոդելների խորը ուսումնասիրությունը, համեմատական վերլուծությունը, ինչպես նաև հատուկ ինստիտուցիոնալ մոդելների կիրառման նախադրյալները և հիմնավորումը մանրամասն ներկայացված են *Եվրոպական Միության Անդամ երկրներում Պետական Գնումների Առանցքային Մարմինները և Կարողությունները* (SIGMA փաստաթուղթ No. 40, 2007):

Ինչու՞ է անհրաժեշտ կազմակերպական կառուցվածքը՝ պետական գնումների գործառույթների իրականացման համար

Եվրոպական Միության Անդամ երկրները հիմնականում հիմնում են կազմակերպական կենտրոնական կառույցներ՝ պետական գնումների ողջ համակարգի հետ կապված գործառույթների իրականացման համար: Քանի որ պետական գնումներն իրենցից ներկայացնում են ցանկացած երկրի տնտեսական գործունեության կենսական տեսակներից մեկը, պետական գնումների համակարգի հաստատուն և արդյունավետ զարգացումը հաճախ քաղաքական առաջնահերթություն է ունենում: Պետական գնումների կենտրոնական մարմինների հիմնումը հանդիսանում է խոշոր ներդրում՝ երկրում պետական գնումների համակարգի հաջողակ զարգացման և ընդհանուր բարենպաստ դիրքի համար: Պետական գնումների բոլոր առանցքային շահագրգիռ կողմերը մեծապես ապավինում են պետական գնումների մարմինների կարողություններին՝ գնումների ազգային համակարգի զարգացման օժանակելու համար:

Կենտրոնական (կամ տարածքային) մակարդակում անհրաժեշտ է իրականացնել մի շարք գործառույթներ, որպեսզի պետական գնումների համակարգն աշխատի բոլոր մակարդակներում: Այս գործառույթները կարող են ներառել պետական գնումների ազգային օրենսդրության մշակումը, պատվիրատուներին և տնտեսվարող սուբյեկտներին օրենսդրության կիրառման վերաբերյալ խորհրդատվությունը, պետական գնումների վերապատրաստումների իրականացումը, հայտարարությունների հրապարակումը և Եվրոպական Հանձնաժողովի և այլ միջազգային կառույցների հետ համագործակցությունը: Որոշ երկրներում այս գործառույթների մեծամասնությունը միավորված են մեկ կենտրոնական մարմնում, այլ երկրներում այս գործառույթները բաշխված են մի քանի կենտրոնական մարմինների միջև, այնինչ որոշ երկրներում բացակայում են այս գործառույթներից մի քանիսն իրականացնող կենտրոնական մարմինները:

Պետական գնումների համակարգի ձևավորման և զարգացման վրա ազդող հանգամանքների և պայմանների տարբերություններն արտացոլված են դրա կառուցվածքում: ԵՄ անդամակցության գործընթացի հետ կապված՝ հաճախ կարճ ժամկետներում պետական գնումների համակարգի նոր, մրցակցության վրա հիմնված օրենսդրության կիրարկումը պահանջում է կառավարության կողմից

օժանդակության և ջանքերի արդյունավետ և արագ մոբիլիզացիա: Հետևաբար, համարվում է, որ իրավական բարեփոխման գործընթացի արդյունավետության նախապայման է հանդիսանում կենտրոնական ինստիտուցիոնալ մարմնի առկայությունը, որը պետք է ունենա համապատասխան լիազորություն և որին պետք է վերապահված լինի պետական գնումների օրենսդրության կիրառումը համակարգելու, դեկավարելու և օժանդակելու պարտականությունը:

Չնայած այս հարցի վերաբերյալ ԵՄ իրավական հստակ պահանջ սահմանված չէ՝ վերջերս ԵՄ-ին անդամակցած Անդամ երկրների և ԵՄ թեկնածու երկրների փորձն ապացուցում է ԵՄ անդամակցության՝ պետական գնումներին վերաբերող գլխում ներառված համապատասխան գործողությունների իրականացման հարցում պետական գնումների կենտրոնական կառույցների կարևորությունը: Այս երկրներում իրավական տարրի բարեփոխումներից բացի՝ գնումների բարեփոխումների գործընթացի էական խնդիրներից է նաև պետական գնումների համակարգման, կիրարկման և մոնիտորինգի համար կենտրոնական կազմակերպական մարմինների լավագույնս ձևավորման հարցը: Միևնույն խնդիրը հավասարապես կարևոր է կամ կարևոր կլինի ԵՄ փորձին համապատասխան իրենց պետական գնումների համակարգը բարեփոխող երկրների համար: Համակարգի ամբողջական գործարկման համար սահմանված նախապայմանների բավարարմանը նպաստող համապատասխան քաղաքական օժանդակությունը պետական գնումների ոլորտի բարեփոխման գործընթացի հիմնաքարն է: Կենտրոնական բարձր մակարդակում գործառույթների և պարտականությունների բավականին լայն շրջանակ ունեցող պետական գնումների համակարգման ուժեղ մարմնի ստեղծումը, պետական գնումների համակարգեր ստեղծող երկրների համար համարվում է կենսական ձեռնարկում: Այնուամենայնիվ, գնումների քաղաքականության կառավարման հարցը մեծամասամբ ծագում է բարեփոխումների ենթատեքստում: Բարեփոխումների խնդիրն է, որ ստեղծում է նման բարեփոխումներն իրականացնելու մեխանիզմի անհրաժեշտություն:

Օրինակ՝ ինչպես ցույց է տվել փորձը, մինչև անդամակցությունն ընկած ժամանակահատվածում Խորվաթիան պետք է ապահովեր, որ **գնումների կազմակերպումը** երաշխավորում է պետական գնումներին վերաբերող բոլոր ոլորտներում քաղաքականության հետևողական լինելը, և պետք է հսկեր այդ քաղաքականության իրականացումը՝ ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնելու գործընթացին, ինչպես նաև պետական գնումներին վերաբերող գլխի հետագա բանակցություններին օժանդակելու նպատակով:

Երբ երկիրն անցել է բարեփոխումների և պետական գնումների կարողությունների զարգացման բարդ գործընթացը, որում պետական գնումների առանցքային մարմիններն ունեն կարևոր և կենսական դեր, թվում է, թե այդ մարմինների կողմից իրականացված գործառույթներից մի քանիսն ավելորդ են և այլս անհրաժեշտ չեն: Այնուամենայնիվ, ցանկացած պետական քաղաքականություն, ներառյալ՝ պետական գնումներին վերաբերող քաղաքականությունը, պետք է որևէ եղանակով ուղղորդվի կառավարության կողմից, բայց ոչ անհրաժեշտաբար բացառապես պետական գնումների հարցերով զբաղվող նման ուժեղ կենտրոնական մարմինների միջոցով:

Միաժամանակ, ԵՄ 15 “հին” Անդամ երկրներում գնումների գործառույթները, մասնավորապես՝ օժանդակման պարտականությունները հաճախ իրականացվում

են ապակենտրոնացված եղանակով: Այդ երկրներում պետական գնումների ոլորտում ինստիտուցիոնալ համակարգերի տարբերությունները կարելի է բացատրել նրանց իրավական, քաղաքական և վարչական ավանդույթների տարբերություններով: Ի լրումն՝ պետական գնումները զարգացել են աստիճանաբար ավելի, քան մեկ դարի ընթացքում, և առանձին ազգային համակարգերը ձևավորվել են՝ որպես հասարակությունում շարունակական զարգացումների արդյունք:

Գնումների հիմնական գործառույթների զարգացումը պետք է հաշվի առնել նաև պետական գնումների փոփոխվող միջավայրի լույսի ներքո, որը դառնում է ավելի բարդ: Պետական գնումները բազմաձյուղ ոլորտ է: Պետական գնումների համակարգերի վրա ուժեղ ազդեցություն և հետևանքներ ունեն փոփոխվող միջավայրի հորիզոնական քաղաքականությունների զանազան ոլորտները և գործոնները, հատկապես՝ իրավական և կարգավորիչ շրջանակի, տեխնոլոգիական զարգացման, հանրային հատվածի զարգացման, կարողությունների զարգացման և կատարողականի չափման, բարեվարքության բարելավման և միջազգային համակարգման և համագործակցության առումով:

Զարգացման և գնումների համակարգման գործառույթները դարձել են կարևոր ԵՄ բոլոր Անդամ երկրների համար՝ որպես արագ փոփոխման ենթակա տեխնոլոգիաների ոլորտներում կառավարության նախաձեռնությունների և օժանդակման պահանջի աճի արդյունք: Տեխնոլոգիական զարգացումը մեծապես օժանդակում է **Էլեկտրոնային գնումներին**, և շատ երկրներ ներմուծում են էլեկտրոնային համակարգեր՝ պատվիրատուների կողմից կիրառելու համար, այսպիսով փոխարինելով ավանդական թղթային եղանակը էլեկտրոնայինով: Էլեկտրոնային գնումների բազմաթիվ հաջողակ լուծումներ արդեն իսկ գործում են Եվրոպայում (Ֆրանսիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Միացյալ Թագավորություն (Ուելս) և այլն):

Պետական գնումների համակարգերում որոշ զարգացումներ կենտրոնանում են պետական գնումների գործընթացում **սոցիալական, բնապահպանական և նորարարական տարրերի** ներմուծման մակարդակի բարձրացման վրա: Օրինակ՝ Եվրոպայում շատ պատվիրատուներ որդեգրել են “կանաչ” պետական գնումների քաղաքականություն կամ պարտավորվել են դրա կիրարկումն ընդգրկել որպես իրենց այլ քաղաքականությունների մաս:

Կառավարությունները պետք է քննարկեն և արդյունավետորեն ազդեն փոփոխության գործընթացի վրա, քանի որ այս փոփոխությունները հետևանքներ կունենան հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության հասնելու նպատակով պետական գնումների համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը ձևավորելու համար: Գնումների ցանկացած կառուցվածք պետք է հաշվի առնի, թե ինչպես կարելի է լավագույնս բավարարել գնումների գործառույթի մասնագիտացման աճող անհրաժեշտությունը և գործառույթի (մասնավորապես՝ գնումների օժանդակման կառույցի) հետագա զարգացման անհրաժեշտությունը: Հետևաբար, կարևոր է գտնել համապատասխան գլոբալ կառուցվածքային մոդել, որը արդյունավետորեն և բնականորեն կհավասարակշռի ներառված գործառույթների առանձնահատկությունները և այս գործառույթներին առաջադրվող պահանջները՝ անկախության և փոխազդեցության առումով՝ հաշվի առնելով գնումների զանազան ոլորտները, որոնք ներառում են նաև կոնցեսիաները և պետություն/մասնավոր

գործընկերությունները (ՊՄԳ), ինչպես նաև հորիզոնական քաղաքականությունների այլ ոլորտներ՝ մինչև ժամանակ խուսափելով շահերի բախումից:

Կարգավորիչ, տեխնոլոգիական և առևտրային զարգացումների համակցված ազդեցությունը ստեղծում է գործառնական մակարդակում, պատվիրատուների և տնտեսվարող սուբյեկտների մոտ գնումների գործառույթի մասնագիտացման բաժրացման պահանջ:

Պետական գնումների հիմնական առանցքային գործառույթները

ԵՄ Անդամ երկրներում ինստիտուցիոնալ մեխանիզմների զգալի բազմազանություն է դրսևորվում՝ չնայած պետական գնումների կառուցվածքում իրականացվող գործառույթների միասնականությունն ակնհայտ է: Հիմք ընդունելով առաջադրանքների բնույթը՝ այս գործառույթները կարող են դասակարգվել որպես **հիմնական գործառույթներ** կամ **օժանդակ գործառույթներ**¹: Նման լայն դասակարգումը հանգեցնում է զանազան գործառույթների համընկնման, հատկապես կազմակերպչական առումով տարբերությունների ենթատեքստում, սակայն այն օգտակար է զանազան երկրներում պետական գնումների առանցքային գործառույթների կազմակերպման եղանակների ուսումնասիրման համար:

Հիմնական գործառույթներն ընդգրկում են ազգային օրենսդրությամբ կարգավորվող գործառույթները՝ հաճախ Եվրոպական Միությանն անդամակցելու հետ կապված պարտավորություններին ուղղակի ի պատասխան: Հետևաբար այս գործառույթներն անհրաժեշտ է սահմանել կենտրոնական կառավարման մակարդակում և նրանք կազմված են առաջնային քաղաքականության և օրենսդրական գործառույթներից, երկրորդային քաղաքականության և կարգավորիչ գործառույթներից, միջազգային համագործակցության գործառույթներից և մոնիտորինգի ու համապատասխանության գնահատման գործառույթներից:

Մնացած բոլոր գործառույթները կարող են դասակարգվել որպես օժանդակ գործառույթներ, քանի որ նրանք չեն դասվում օրենքով նախատեսված պարտավորությունների շարքը՝ ԵՄ բոլոր Անդամ երկրների համար: Անհրաժեշտ է նշել, որ պետական գնումների համակարգի գործարկման համար այս օժանդակ գործառույթները հիմնական գործառույթներից պակաս կարևոր չեն: Նրանք կարող են իրականացվել պետական գնումների համակարգում գնումների կենտրոնական մարմինների կողմից, սակայն նույնքան հաճախ նրանք տրամադրվում են պետական գնումների կառույցների կամ ավելի լայն հանրային վարչակազմի, ինչպես նաև մասնավոր հատվածի զանազան մարմինների կողմից կամ կիսվում են նրանց միջև: Օժանդակ գործառույթները կազմված են խորհրդատվական և գործառնական օժանդակության, հրապարակման և տեղեկատվության, մասնագիտացման, կարողությունների հզորացման և զարգացման և գնումների համակարգման գործառույթներից:

Առաջնային քաղաքականության և օրենսդրական գործառույթներ

Կառավարության մակարդակում լիազորված մարմիններն ունեն պետական գնումների գործառնությունների համար ընդհանուր իրավական դաշտի ստեղծման

¹ *Եվրոպական Միության Անդամ երկրներում Պետական Գնումների Առանցքային Մարմինները և Կարողությունները (SIGMA փաստաթուղթ No. 40, 2007):*

նպատակով գնումների հիմնարար քաղաքականությունների մշակման պարտականություն: Այս համատեքստում ամենակարևոր գործառնությունը պետական գնումների առաջնային օրենսդրության նախապատրաստումն ու մշակումն է, որը ներառում է ԵՄ Գնումների Հրահանգները կիրարկող ազգային օրենսդրությունը, ինչպես նաև ԵՄ Հրահանգների գործողության շրջանակից դուրս գտնվող ոլորտների նկատմամբ կիրառվող կարգավորիչ դաշտը կամ քաղաքականության շրջանակը: ԵՄ Հրահանգները փոխատեղվում են գնումների առաջնային օրենսդրության մեջ ԵՄ բոլոր Անդամ երկրներում, սակայն նրանցից ոչ բոլորն են առաջնային օրենսդրության մեջ կարգավորում Հրահանգների գործողության շրջանակից դուրս գտնվող ոլորտները: Այս գործառնության շրջանակներում իրականացվող հիմնական պարտականությունները հետևյալն են. մշակման գործընթացում աշխատանքային խմբի ղեկավարում; գնումների համակարգի հիմնական շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների կազմակերպում և պետական գնումներին վերաբերող օրենսդրական այլ գործունեությանը մասնակցություն:

Օրենսդրական և քաղաքականության գործառնությունները հաճախ իրականացվում են համապատասխան գնումների կենտրոնական մարմինների կողմից (Բուլղարիա, Կիպրոս, Ռումինիա և Սլովակիայի Հանրապետություն):

Օրենսդրության մշակման գործառնությունը հաճախ իրականացվում է Ֆինանսների Նախարարության/Գանձապետարանի, Էկոնոմիկայի նախարարության և Արդարադատության նախարարության կողմից, ինչը կազմակերպվում է կամ առանձին, կամ որպես պետական գնումների կենտրոնական մարմնի բաղադրիչ: Այսպես է, օրինակ, Էստոնիայում, որտեղ Ֆինանսների նախարարության մաս կազմող Պետական Գնումների Գրասենյակը (ՊԳԳ) պատասխանատու է այս առաջադրանքի համար:

Հետևյալ երկրներում օրենսդրության մշակման գործառնությունը հստակորեն սահմանազատված է գնումների հիմնական կենտրոնական մարմիններից. Էստոնիա, Հունգարիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա և Շվեդիա:

Երկրորդային քաղաքականության և կարգավորիչ գործառնություններ

Երկրորդային քաղաքականության և կարգավորիչ գործառնությունները վերաբերում են կառավարության կողմից պաշտոնապես ընդունված այն կանոնակարգերին, որոնք նպատակ ունեն կիրառելու առաջնային օրենսդրությունը հատուկ ոլորտներում կամ տրամադրելու կիրարկող գործիքներ՝ առաջնային օրենսդրության կիրառմանն օժանդակելու նպատակով: Երկրների միջև կան հստակ տարբերություններ՝ ենթաօրենսդրական ակտերի անհրաժեշտության կամ ծավալի հետ կապված: Որոշ երկրներ գործում են շատ քիչ ենթաօրենսդրական ակտերով կամ առանց դրանց և դրա փոխարեն հիմնվում են, օրինակ առաջնային օրենսդրությունը խորհրդարանում նախապատրաստելու նպատակով ընդունված դեկլարատիվ բնույթի դրույթների (զանազան դրույթների վերաբերող մեկնաբանական դրույթներ), համապատասխան մարմինների կողմից մեկնաբանական հաղորդագրությունների կամ նախադեպային իրավունքի վրա: Մյուսները օրենքով պահանջում են ենթաօրենսդրական ակտերի ընդունում, ինչը որոշ դեպքերում նույնիսկ համարվում է առաջնային օրենսդրության արդյունավետության ապահովման պայման: Կան նաև երկրներ, որոնք առաջնային օրենսդրությունը և ենթաօրենսդրական ակտերը լրացնում են գնումների համապատասխան կենտրոնական մարմինների կողմից ընդունված երրորդային օրենսդրության դրույթներով (օրինակ՝ գործառնական ուղեցույցներ): Այս առումով,

մի շարք օժանդակ կանոնակարգեր կարող են ներառել կիրարկող նորմատիվ իրավական ակտեր՝ ընդգրկելով գնման ընթացակարգի տեխնիկական տարրերը, առաջնային օրսնդրության մեջ չընդգրկված ոլորտները կամ ոլորտները, որտեղ անհրաժեշտ են կիրառումը հստակեցնող ցուցումներ; գործառնական ուղեցուցները, հայտարարությունների ստանդարտ ձևաչափերը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների համար մրցույթների օրինակելի փաստաթղթերը՝ ներառյալ՝ մասնակիցների ուղեցույցները, հայտի ձևաչափերը և տեխնիկական մասնագրերը և օրինակելի ընդհանուր պայմանները՝ ներառյալ՝ աշխատանքների, ապրանքների, ծառայությունների և կոնցեսիաների պայմանագրերի ձևաչափերը:

Միջազգային համակարգման գործառույթներ

Պետական գնումների միջազգային և ներեվրոպական գործունեության համակարգումը ԵՄ Անդամ երկրի կարևոր գործառույթներից է, որը հիմնականում ընդգրկում է հետևյալ պարտավորություններից մեկը կամ բոլորը. միջազգային կարգավորիչ գործունեությանը ազգային մասնակցության համար պատասխանատվություն, ի թիվս այլոց Առևտրի Համաշխարհային Կազմակերպության Պետական Գնումների Համաձայնագրի ոլորտում, որտեղ Անդամ երկրները հանդես են գալիս որպես դիտորդներ Եվրոպական Հանձնաժողովի կողմից իրականացվող բանակցություններում կամ Միացյալ Ազգերի Կազմակերպության Միջազգային Առևտրային Իրավունքի Մոդելային օրենքի (UNCITRAL) ոլորտում; ԵՄ խորհրդատվական հանձնաժողովին և դրա՝ պետական գնումների հետ գործ ունեցող աշխատանքային խմբերին ազգային մասնակցության համար պատասխանատվություն; Եվրոպական Հանձնաժողովի համար հարցերի և կիրառման, ինչպես նաև ԵՄ Պայմանագրի հիման վրա խախտման ընթացակարգերի հետ կապված որպես ազգային շփման կետ հանդես գալը; մասնակցությունը միջազգային ցանցերում, ինչպիսին է Պետական Գնումների Եվրոպական Ցանցը (PGC) և այլ երկրների համապատասխան մարմինների հետ համագործակցությունը:

ԵՄ Անդամների մեծ մասի պետական գնումների կենտրոնական մարմինը կամ օրենսդրության մշակման համար պատասխանատու մարմինը իրականացնում է միջազգային համագործակցության գործառույթ, սակայն հաճախ այս գործառույթները **բաշխվում են երկու մարմինների միջև**, ինչպես էստոնիայում, Հունգարիայում, Լատվիայում, Լիտվայում և Շվեդիայում:

Մոնիտորինգի գործառույթներ² և համապատասխանության գնահատման գործառույթներ

Պետական գնումների մոնիտորինգը կարևոր դեր է խաղում պետական գնումների բոլոր ազգային համակարգերում: Մոնիտորինգը կազմված է պետական գնումների համակարգի յուրաքանչյուր և ցանկացած համակարգային ուսումնասիրությունից, որն իրականացվում է այս համակարգի գործունեությունը և ժամանակի ընթացքում զարգացումը գնահատելու և քաղաքականություն որոշողների կողմից սահմանված թիրախավորված նպատակների իրականացված լինելը հաստատելու նպատակով: Համապատասխանության գնահատման գործառույթը ներառում է մեթոդներ և ընթացակարգեր, որոնք կիրառվում են պետական գնումներում անկանոնությունները հայտնաբերելու և ուղղելու նպատակով: Որոշ երկրներում

² Լրացուցիչ տեղեկությունների համար տես Պետական Գնումների Մոնիտորինգ (SIGMA Համառոտագիր 27, Հունիս 2013).

պետական գնումների կառույցներն ավելի ակտիվ դեր են խաղում պետական գնումների օրենսդրության խախտումների համար դատարաններում դատական վերանայման ընթացակարգերի նախաձեռնման հարցում:

Օրինակ՝ Խորվաթիայում Էկոնոմիկայի նախարարությունը, որը պետական գնումների համակարգի համար պատասխանատու մարմինն է, լիազորված է պատվիրատուների դեմ համապատասխան դատարանում հարուցել **փոքր իրավախախտումների ընթացակարգեր**, եթե նախարարությունը հայտնաբերում է Պետական Գնումների Ակտի խախտումներ:

ԵՄ-ին վերջերս անդամակցած որոշ Անդամ երկրներ՝ ի լրումն պետական գնումների ազգային գործառույթների, մշակում են համապատասխանության գնահատման հատուկ գործառույթներ ԵՄ ֆոնդերի համար:

Նախնական հսկողության հիման վրա առողիտի որոշակի տեսակներ ունեցող ԵՄ Անդամ երկրներն են. Կիպրոս, Էստոնիա, Ֆրանսիա, Հունգարիա, Լատվիա, Մալթա, Լեհաստան և Ռումինիա:

Մոնիտորինգի և համապատասխանության գնահատման գործառույթը ներառում է հետևյալ պարտականությունները.

- Պետական գնումների ազգային համակարգի գործունեության վերաբերյալ կառավարության կամ խորհրդարանի համար տարեկան հաշվետվությունների պատրաստում;
- Վիճակագրական կամ այլ տեղեկությունների հավաքագրումում, *ի թիվս այլոց*, պետական գնումների պլանավորման, շուկա մուտք գործելու, շնորհված պայմանագրերի և պետական գնումների համակարգի կատարողականի և արդյունավետության վերաբերյալ;
- Առողիտ, հսկողություն, ստուգումներ, իրավական համապատասխանության ստուգում;
- Եթե կիրառելի է, լիազորման գործառույթի իրականացում՝ գնման գործընթացում պատվիրատուների որոշ որոշումների նախնական հաստատման միջոցով, ինչպիսիք են պայմանագրային փաստաթղթերը, տեխնիկական մասնագրերը և պակաս մրցակցային ընթացակարգերի կամ արագացված ընթացակարգերի կիրառումը;
- Դատական վերանայման ընթացակարգերի նախաձեռնում դատարաններում՝ պետական գնումների օրենսդրության խախտումների համար;
- Եթե կիրառելի է, հավաստագրված տնտեսվարող սուբյեկտների և/կամ հավաստագրված գնումների համակարգողների պաշտոնական ցանկի վարում:

Խորհրդատվական և գործառնական օժանդակության գործառույթներ

Այս կարևոր գործառույթներն առկա են, որպեսզի օժանդակեն պատվիրատուներին, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտներին իրենց համապատասխան

պարտականություններն իրականացնելիս՝ հնարավորություն տալով գործել արդունավետ և ազգային օրենսդրությանը, ԵՄ Պայմանագրի հիմնարար սկզբունքներին և լավագույն փորձին համապատասխան: Հատկապես բարեփոխումների սկզբնական փուլերում իրավական դաշտի և հարակից այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրող մարմնի առկայությունն էական է: Մասնավորապես, իրավական խորհրդատվության գործառույթների իրականացումը պետական գնումների կենտրոնական մարմինների պարտականությունն է, սակայն այս գործառույթների մի մասը հաճախ բաշխվում և իրականացվում է պետական գնումների համայնքի մեծ թվով մասնակիցների կողմից, ինչպիսիք են օրինակ տարածքային և տեղական վարչակազմերի միությունները, խոշոր պետական պատվիրատուներն ու կոմունալ կազմակերպությունները, մասնավոր հատվածը (խորհրդատուներ և իրավաբանական կազմակերպություններ), առևտրաարդյունաբերական պալատները և փոքր և միջին ձեռնարկությունների միությունները: Խորհրդատվական և գործառույթությունների օժանդակման գործառույթները ներառում են հետևյալը. պատվիրատուներին և տնտեսվարող սուբյեկտներին ամենօրյա մասնագիտական և իրավական օժանդակություն տրամադրելու համար սպասարկման կենտրոնի կազմակերպում; գնումների գործընթացի բոլոր փուլերը կառավարելու համար ուղղորդող համակարգերի և գործառնական գործիքների մշակում, օրինակ՝ հայտերի գնահատման մեթոդաբանություն; և պետական գնումների զանազան տարրերի վերաբերյալ հրապարակումների, մեկնաբանությունների և մեկնաբանական հաղորդագրությունների տրամադրում:

Հրապարակման և տեղեկատվական գործառույթներ

Թափանցիկության սկզբունքը սահմանում է պատվիրատուների պարտականությունը՝ ապահովելու ի օգուտ ցանկացած մասնակցի հայտարարության այնպիսի աստիճան, որը բավարար է շուկան մրցակցության համար բացելու համար, և հետևաբար այն հանդիսանում է պետական գնումների համակարգի հիմնքարը: Մի շարք Անդամ երկրներում հրապարակման զանազան գործառույթների իրականացումը վերապահված է գնումների կենտրոնական մարմնին: Այն կարող է պատասխանատու լինել պետական գնումների ազգային տեղեկատվի կառավարման համար և այս պարտականությունը կարող է ընդգրկել նաև հայտարարությունների որակի հսկողություն հրապարակումից կամ ներկայացումից առաջ: ԵՄ շեմից բարձր պայմանագրերի հետ կապված՝ կենտրոնական մարմնին կարող է վերապահվել *Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկատուին* պատվիրատուների հայտարարությունների ներկայացման պարտականության իրականացումը, ինչը կարող է ներառել պահանջները չբավարարող հայտարարությունների մերժման գործառույթ:

Օրինակ՝ Հունգարիայում և Սլովակիայի Հանրապետությունում գնումների կենտրոնական գրասենյակները ստուգում են հայտարարությունների նախնական տարբերակները մինչ դրանք ԵՄ-ի Պաշտոնական Տեղեկատու ուղարկելը: Խորվաթիայում, Իռլանդիայում, Սլովենիայում և Միացյալ Թագավորությունում գնումների կենտրոնական մարմինները նման գործառույթ չունեն:

Պետական գնումների օրենսդրության և քաղաքականության վերաբերյալ տեղեկությունների, ներառյալ՝ լրացուցուչ տեղեկությունների աղբյուրների վերաբերյալ նյութերի և խորհրդատվության հրապարակումը և տարածումը

հարակից պարտականություններ են: Այս տեղեկությունները կարող են ընդգրկել թղթային տարբերակները, ինչպես նաև համացանցային ռեսուրսները կամ ցանկացած այլ լրատվամիջոցների ռեսուրսներ: Մասնավորապես այս գործառնությունը հետ կապված պարտականությունները կարող են ընդգրկել հայտարարությունների օրինակելի ձևերի և դրանց կիրառման ուղեցույցերի տրամադրում, հայտարարությունների և շնորհման հայտարարությունների հրապարակման համացանցային համակարգերի գործարկում, ներառյալ՝ հայտարարությունների մշակման, ստացված հայտարարությունների որակի և օրինաչափ լինելու նկատմամբ հսկողություն, հայտարարությունների հրապարակում և հայտարարությունները Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկատու ներկայացում; պետական գնումների ռեեստրների և պետական գնումների տվյալների այլ բազաների կառավարում; պատվիրատուների ցանկի վարում; գնումների համայնքին օժանդակելու նպատակով համացանցային տեղեկատվական կամ ուղղորդող համակարգի գործարկում, ներառյալ՝ ուղղորդող փաստաթղթերը, հայտի և պայմանագրային փաստաթղթերի օրինակելի ձևը, մեկնաբանական հաղորդագրությունները (որոնք նաև խորհրդատվական գործառնությունների մասն են կազմում):

Մասնագիտացման և կարողությունների հզորացման գործառնություններ

Գնումների անձնակազմի մասնագիտացումը և գնումների գործառնությունների հզորացումը կարելի է դիտել որպես պետական գնումների ցանկացած ազգային համակարգի արդյունավետությունը բարձրացնող կարևորագույն գործառնություն: Պատվիրատուները բախվում են գնումների ավելի բարդ միջավայրի՝ ավելի շատ գործառնություններով և պարտականություններով կամ էականորեն տարբեր իրավիճակների՝ գնումների ավանդական պարտականությունների հետ համեմատած, ինչն ազդում է պահանջվող ունակությունների և կազմակերպչական ու համագործակցային լուծումների ընտրության վրա: Հետևաբար, առկա է զանազան ոլորտներում և մասնագիտություններում պետական գնումների բարձրագույն կրթության, ինչպես նաև մասնագիտացված վերապատրաստումների շարունակական պահանջ: Արդյունավետ լինելու համար պետական գնումների կառույցները պետք է գնումների փոփոխվող միջավայրի նկատմամբ զգայուն լինեն և ձեռնարկեն պետական գնումների համար համապատասխան ինստիտուցիոնալ լուծումներ գտնելու քայլեր: Մասնավորապես, անհրաժեշտ է օժանդակման ավելի ուժեղ կառույց, որը կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն և կիրականացնի կարողությունների հզորացում: Այս գործառնությունները կարող են վերապահվել գնումների կենտրոնական մարմիններին և կարող են ներառել պատվիրատուների համար վերապատրաստման ազգային ծրագրերի ձեռնարկումը և համակարգումը; համալսարաններում և վերապատրաստման քոլեջներում, ինչպես նաև մասնավոր կազմակերպությունների միջոցով անկախ ուսուցմանը և հետազոտություններին օժանդակումը; պետական գնումների իրավունքի, տնտեսագիտության և քաղաքականության վերաբերյալ հետազոտական ծրագրի կազմակերպումը; և պետական գնումների իրավունքի, տնտեսագիտության և քաղաքականության վերաբերյալ ազգային կամ միջազգային գիտական կամ այլ միջոցառումներին մասնակցությունը: Վերապատրաստումն այս գործառնությունից ամենակարևոր գործունեությունն է, սակայն կենտրոնական մարմինը գործում է ավելի շատ որպես պատվիրատուների և տնտեսվարող սուբյեկտների համար գնումների վերապատրաստումների *նախաձեռնող* (ինչը ներառում է վերապատրաստման քաղաքականության սահմանման պարտականությունը),

օժանդակող և *համակարգող*, քան վերապատրաստման ծրագրերի իրականացնող: Կենտրոնական մարմինների գործնական ներգրավվածությունը հիմնականում սահմանափակվում է տեղեկատվական բնույթի համաժողովների և սեմինարների կազմակերպմամբ, որոնք ներառում են օրենսդրության և այս մարմինների այլ կարևոր պարտականությունների ներկայացումը: Ներգրավվածությունը կարող է ներառել նաև վերապատրաստման ծրագրերի և նյութերի պատրաստում, սակայն համալսարանները, հետազոտական ինստիտուտները և մասնավոր հատվածը սովորաբար իրականացնում են կարողությունների հզորացման ավելի համապարփակ, մասնագիտացված և երկարաժամկետ գործունեություն: ԵՄ որոշ Անդամ երկրներում կենտրոնական մարմինները պատասխանատու են պետական գնումների պաշտոնյաների կամ գնումների խորհրդատուների հավատարմագրման սխեմաների համար: Այնուամենայնիվ, մասնագիտացումը և կարողությունների հզորացումը չեն սահմանափակվում վերապատրաստումներով և հետազոտություններով: Այս գործառույթը ներառում է շատ ավելի լայն մոտեցում և խնդիրներ, մասնավորապես.

- Ընդլայնել պետական գնումների հասկացությունը մրցութային փուլից դուրս և համապատասխանեցնել կարգավորիչ դաշտին՝ ներառելու գնումների ցիկլի բոլոր փուլերը;
- Դնել գնումների գործառույթը քաղաքական քարտեզի վրա, որպեսզի այն ճանաչվի կարևոր ռազմավարական գործոն՝ հանրությանը հնարավոր ամենացածր գնով արդյունավետ ծառայությունների մատուցման համար;
- Ապահովել, որ գնումները լինեն բյուջետավորման և պետական ծախսային գործընթացի կենտրոնում;
- Ներգրավել գնումների համապատասխան մասնագիտական փորձառություն և բարձրացնել գնումների մասնագիտության կարգավիճակը;
- Սահմանել, թե ինչպես պետք է լավագույնս կազմակերպել և կառավարել գնումների գործառնությունները պատվիրատուի մակարդակում;
- Սահմանել որոշումների ընդունման մեխանիզմն այնպես, որպեսզի հայեցողական իրավունքի և հսկողության միջև ճիշտ հավասարակշռություն լինի;

Զարգացման և գնումների համակարգման գործառույթներ

Զարգացման և գնումների համակարգման գործառույթները ԵՄ բոլոր Անդամ երկրներում դարձել են կարևոր՝ որպես էական իրավական և արագ փոփոխությունների ենթակա տեխնոլոգիական ոլորտներում կենտրոնական կառավարման նախաձեռնությունների և կազմակերպչական ու գործառնական օժանդակության պահանջի աճի հետևանք: Որոշ Անդամ երկրներում այս գործառույթները դարձել են գնումների հիմնական կենտրոնական մարմինների պարտականություն, մինչդեռ այլ երկրներում այս գործառույթները վերապահված են մասնագիտացված մարմինների: Զարգացման և գնումների համակարգման գործառույթը ներառում է, ի թիվս այլ պարտականությունների, կոնցեսիաների և ՊՄԳ ծրագրերի համակարգում և օժանդակում, պետական գնումների կատարողականի չափման համակարգի ներմուծում և պետական հատվածում պայմանագրային մոդելների մշակման նախաձեռնության մեկնարկում:

Կարևորագույն գործառույթներից մեկը գնումների տեխնիկայի մշակումն է, ինչպիսին է, օրինակ՝ կատարողականի վրա հիմնված տեխնիկական մասնագրերը: Գնումների մարմինները դարձել են ակտիվ նաև գնումների էլեկտրոնային համակարգերի ստեղծման հարցում՝ պատվիրատուների օգտագործմանը տրամադրելով էլեկտրոնային համակարգեր: Պետական գնումների համակարգի մի շարք զարգացումներ կենտրոնացել են սոցիալական, բնապահպանական և նորարարական տարրերը պետական գնումների գործընթացում ներգրավելու մակարդակի բարձրացման վրա: Պատշաճ համակարգման և սահմանված պահանջներին համապատասխան պետական գնումների համակարգի զարգացման կարևորությունը շեշտվել է նաև ԵՄ ինտեգրման գործընթացում: Պետական գնումների բազմաձյուղ բնույթը և հորիզոնական քաղաքականության զանազան ոլորտների հետ դրա կապը ևս պահանջում են համակարգման համապատասխան գործունեություն և քաղաքական օժանդակություն՝ միջոլորտային փոխկապակցվածության հասնելու համար:

Ի՞նչ կազմակերպական մոդելներ գոյություն ունեն

ԵՄ Անդամ երկրներում գոյություն ունեցող պետական գնումների կառուցվածքները կարելի է բաժանել երեք մեծ խմբի.

- Գնումների **կենտրոնացված** կառուցվածքին հատկանշական է գնումների գործառույթի խիստ կենտրոնացվածությունը, որը բաշխված է մի քանի կենտրոնական մարմինների միջև (հիմնականում մեկ կամ մի քանի մարմիններ):
- Գնումների **կիսակենտրոնացված** կառուցվածքն ունի գնումների գործառույթների խառը կենտրոնացում, որոնք բաշխված են պետական վարչակազմի տարբեր մակարդակներում գտնվող սահմանափակ թվով մարմինների միջև (հիմնականում երեք կամ չորս մարմիններ):
- Գնումների **ապակենտրոնացված** կառուցվածքին հատկանշական է գնումների գործառույթների ցրվածությունը, որոնք բաշխված են պետական վարչակազմի տարբեր մակարդակներում գտնվող մի քանի մարմինների միջև և այն հաճախ կազմված է հանրային և մասնավոր կազմակերպություններից (հիմնականում ներգրավված են ավելի, քան հինգ մարմիններ):

Որպես կանոն՝ հիմնական գործառույթները կազմակերպվում են կենտրոնացված կարգով, այնինչ օժանդակ գործառույթները կարող են իրականացվել կենտրոնացված և ապակենտրոնացված մակարդակում լայն շրջանակի մարմինների, այդ թվում՝ մասնավոր հատվածի մարմինների կողմից:

Որոշ համակարգերում օրենսդրական և քաղաքականության գործառույթներն իրականացվում են նախարարական կառույցի կողմից, այնինչ գնումների այլ կարևոր գործառույթներ վերապահված են գնումների հատուկ մարմնի, որը կարող է լինել կառավարության մաս կամ օրենսդրին ենթակա:

Գնումների մեկ գերակա մարմին ունեցող պետական գնումների կառուցվածքներում հիմնականում միննույն մարմինն է իրականացնում օրենսդրական և քաղաքականության գործառույթները: Հետևաբար, օրենսդրական գործառույթներն իրականացվում են միայն կառավարության մաս կազմող գերակա մարմինների կողմից: Ի լրումն՝ գերակա մարմինն իր “հիմնական գործառույթների” շարքում

հիմնականում պատասխանատու է կառավարությանը խորհրդատվության տրամադրման, գնումների քաղաքականության մշակման, միջազգային համագործակցության և մոնիտորինգի որոշակի գործառնությունների համար: Վերապատրաստումներին և հետազոտություններին, զարգացմանը և բիզնես կառավարմանը, հրապարակմանը և տեղեկատվությանը վերաբերող և վարչական ու մոնիտորինգի պարտականությունները հիմնականում իրականացվում են գերակա մարմնից դուրս:

ԵՄ այն Անդամ երկրներում, որոնց պետական գնումների կառույցն ունի **գնումների մեկ հիմնական մարմին** համապատասխան պարտականությունները կարող են բաշխվել մի քանի մարմինների և կազմակերպությունների միջև, մինչդեռ մարմիններից մեկն ունի ավելի կարևոր դիրք: Այս խմբի օրինակներ են Ավստրիայի Դաշնային Կանցլերության Սահմանադրական Ծառայությունը (BKA-VD), Գերմանիայի Էկոնոմիկայի և Տեխնոլոգիայի Դաշնային Նախարարությունը (BMWi), Հունգարիայի Պետական Գնումների Խորհուրդը (PPC) և Լյուքսեմբուրգի Հանրային Աշխատանքների Նախարարությունը:

Գնումների կիսակենտրոնացված կամ ապակենտրոնացված կառուցվածքների ընդհանուր հատկանիշը համապատասխան պարտականությունները զանազան մարմինների և կազմակերպությունների միջև բաշխելն է: Այն դեպքում, երբ որոշ մարմիններ, հատկապես՝ համապատասխան նախարարությունները պատասխանատու են կարգավորիչ գործառնությունների համար, հատուկ մարմնի կամ կազմակերպության վրա շեշտադրմամբ հիմնական կենտրոնը հաճախ է բացակայում, հատկապես՝ ավելի ապակենտրոնացված կառուցվածքներում: Այս խումբը հակադիր է գնումների կենտրոնացված կառուցվածքին, որի համար հատկանշական է գործառնությունների բարձր կենտրոնացումը՝ վերապահված մի քանի մարմնի:

Ֆինլանդիան գնումների կառուցվածքի **ապակենտրոնացված համակարգի** ամենաակնհայտ օրինակն է, որի համար հատկանշական է մի քանի մարմինների միջև հստակ բաժանված գնումների գործառնությունները և գնումների գերակա մարմնի բացակայությունը: Կարևոր պարտականությունները կենտրոնացված են Ֆինանսների Նախարարությունում (քաղաքականության և փաստաթղթերի օրինակելի ձևերի մշակում) և Առևտրի և Արդյունաբերության Նախարարությունում (օրենսդրության մշակում և որոշակի մոնիտորինգ): Այնուամենայնիվ, այլ գործառնությունները բաժանված են Արտաքին Գործերի Նախարարության, Գնումների Պետական Խորհրդի, Պետական Գնումների Խորհրդատվական Բաժնի, Ֆինանսական Համայնքների և Տարածքային Մարմինների Միության, Պետական Աուդիտի Գրասենյակի և մասնավոր հատվածում գործող (սակայն հիմնականում պետությանը պատկանող) HAUS Ltd., Efeko Ltd. և Hansel Ltd միջև: Ավելին, երկիրը ուղղահայաց ապակենտրոնացված է, քանի որ տարածաշրջաններն ու համայնքներն ունեն ուժեղ դեր՝ մասամբ իրենց ազգային միությունների շնորհիվ:

Անկախ գործող կառուցվածքային մոդելից, առկա են պետական մարմնի կամ մարմինների դիրքին վերաբերող մի քանի կազմակերպական լուծումներ: Պետական գնումների գործառնություն իրականացնող կենտրոնական մարմինները կարող են կազմակերպվել ենթակայության զանազան եղանակներով: Հիմնականում այս

կենտրոնական մարմինները կազմակերպվում են Ֆինանսների Նախարարության կամ Գանձապետարանի, Աշխատանքների Նախարարության, Տարածքային Զարգացման Նախարարության, Վարչապետի (Կանցլերի), Նախագահի Աշխատակազմի, Նախարարների Խորհրդի, Խորհրդարանի, Մրցակցային Մարմնի կամ այլ պետական մարմնի կազմում կամ ենթակա են դրանց:

Որոշ դեպքերում բազմաթիվ բաժիններ կարող են ընդգրկել պետական գնումների մեկ կամ մի քանի գործառույթներ և կարող են կազմակերպվել ինստիտուցիոնալ միջավայրի հետ մեկտեղ: Հաճախ քաղաքականության և առաջնային օրենսդրության գործառույթները տեղակայված են նախարարություններում, ինչպիսին է, օրինակ՝ Ֆինանսների Նախարարությունը կամ Արդարադատության Նախարարությունը, այնինչ խորհրդատվական և հրապարակման գործառույթներն ավելի հաճախ հանդիպում են զանազան տեղակայում և ենթակայություն ունեցող կենտրոնական մարմիններում:

ԵՄ որոշ Անդամ երկրներում պետական գնումների գրասենյակներին կամ գործակալություններին տրվել է ավելի անկախ կարգավիճակ՝ խորհրդարանի կամ կառավարության ուղղակի ենթակայությամբ, այնինչ այլ Անդամ երկրներում այս գրասենյակները գործում են որպես վարչություններ նախարարությունների կազմում:

Գնումների մարմնի **կարգավիճակն** այլ կարևոր հարց է, որը պետք է հասցեագրել, քանի որ այս կարգավիճակը սահմանում է այն դերն ու հնարավոր ազդեցությունը, որը մարմինը կարող է ունենալ պետական գնումների համակարգում: Կարգավիճակը վերաբերում է հետևյալ տարրերին.

- Հանրային վարչակազմում գնումների մարմնի դերը կամ տեղակայումը;
- Որոշումների ընդունման լիազորությունը, մանդատը, մարմնին վերապահված գործառույթները և դրա իրավասության իրավական հիմքերը (օրինակ՝ պետական գնումների օրենք);
- Կառավարման անկախությունը, որն արտահայտված է նշանակման և լիազորությունների դադարեցման ընթացակարգերում և պայմաններում (օրինակ՝ նախագահի, տնօրենի, բաժնի ղեկավարի);
- Կազմակերպչական կառուցվածքը, կազմը և մարմնին տրված աշխատանքային ռեսուրսները;
- Ֆինանսական միջոցները և անձնակազմի և գործառնական ծախսերի համար նախատեսված ռեսուրսների չափը (օրինակ՝ ընդհանուր բյուջե, հատուկ ֆոնդեր և սեփական ֆինանսավորում);
- Գնումների մարմնի գործունեության նկատմամբ հսկողության եղանակները:

Պետական գնումների կենտրոնական մարմինների վարչական կարողությունները

Անկախ գոյություն ունեցող կազմակերպչական մոդելից կամ համակարգից՝ բավարար վարչական կարողությունների առկայությունը շատ կարևոր հարց է ԵՄ-ին վերջերս անդամակցած և ԵՄ թեկնածու երկրների համար, ինչպես նաև նույնքան կարևոր է ԵՄ փորձին համապատասխան իրենց պետական գնումների համակարգը

բարեփոխող երկրների համար: Թեկնածու երկրի համար բավարար չէ ուղղակի համապատասխանել ԵՄ օրենսդրությանը (*acquis*); ակնկալվում է, որ այն պետք է ստեղծի պետական գնումների լայն իմաստով ապահով և արդյունավետ համակարգ: Անդամակցող երկրները պետք է ցուցադրեն, որ ունեն ԵՄ Հրահանգները ազգային օրենսդրության մեջ փոխատեղելու, պետական գնումների գործառնությունները արդյունավետորեն մոնիտորինգի ենթարկելու և ԵՄ Հրահանգներում ու ԵՄ Պայմանագրում նախատեսված այլ պարտականություններն իրականացնելու համար բավարար վարչական կարողություններ կառավարման կենտրոնական մակարդակում: Այս պարտականությունները ենթադրում են, որ կստեղծվեն համապատասխան մարմիններ և մեխանիզմներ, ներառյալ՝ վերանայման հետ կապված, և կապահովվի, որ այս մարմիններն ունենան համապատասխան անձնակազմ և կարողություններ՝ իրենց բոլոր գործառնություններն արդյունավետորեն իրականացնելու համար, որոնք կարող են ներառել վերը նշված հիմնական և օժանդակ գործառնությունների լայն շրջանակ: ԵՄ Հրահանգի առումով ԵՄ Անդամ երկրները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ազգային օրենսդրության մեջ այս դրույթներն ամբողջապես կիրառելու համար և ապահովելու, որ ոչ մի այլ ազգային դրույթ չխաթարի նրանց կիրառելիությունը:

Պետական գնումների կենտրոնական մարմնի վարչական կարողությունները կազմված են մարդկային ռեսուրսներից, ներառյալ՝ անձնակազմի չափը, անձնակազմի կառուցվածքը և նրանց կրթությունը; ֆինանսական ռեսուրսներից, և կառավարման կարգավիճակից:

Վարչական կարողությունների ենթատեքստում կենտրոնական հարցը վերաբերում է մարդկային ռեսուրսներին: Անձնակազմի չափը (գնումների հիմնական կենտրոնական մարմնի և այլ համապատասխան մարմինների համար աշխատող մարդկանց քանակը) սկզբնակետն է: Եթե այս մարմինները շարունակաբար ունեն անձնակազմի պակաս, նրանց մարդկային ռեսուրսների կարողությունը բավարար չէ վերապահված բազմաթիվ գործառնություններն արդյունավետորեն իրականացնելու համար: Ավելին, անձնակազմի կրթությունը կարևոր է: Իրավաբանների, տնտեսագետների, քաղաքական գիտնականների, գործնական ոլորտի նախկին աշխատակիցների, ինժեներների կամ հաշվապահների քանակը նույնքան կարևոր է, ինչքան օժանդակ անձնակազմի վերապատրաստումները: Ի լրումն՝ ներքին կամ արտաքին շարունակական կրթությունը կարևոր դեր է խաղում:

Պետական գնումների ազգային շուկայի չափի և գնումների կենտրոնական մարմնին վերապահված պարտականությունների բարդության և դրա անձնակազմի չափի միջև կապը մեկ այլ անհրաժեշտ նկատառում է: Գնումների կենտրոնական մարմնի անձնակազմի չափը տարբեր է ԵՄ տարբեր Անդամ երկրներում: Ավելին, քանի որ համապատասխան մարմիններից շատերը գործ ունեն այլ հարցերի հետ՝ ի լրումն վերը նշված պետական գնումների գործառնությունների, ոչ միշտ է պարզ, թե քանի մարդ է իրականում աշխատում պետական գնումների հիմնական և օժանդակ գործառնությունների համար:

Ֆինանսական ռեսուրսները վերաբերում են պետական գնումների կենտրոնական մարմինների բյուջեներին, ինչպես նաև եկամտի այլ աղբյուրներին: Շատ մարմիններ ստանում են իրենց եկամուտը ընդհանուր բյուջեից, օրինակ՝ այն նախարարությանը հատկացված բյուջետային միջոցներից, որին իրենք կցված են: Այլ գրասենյակներ կարող են ունենալ իրենց սեփական ֆինանսական միջոցները, օրինակ՝ հայտարարության հրապարակման համար վճարվող տուրքից կամ նույնիսկ որպես

որոշակի “հարկ” յուրաքանչյուր պայմանագրից: Այստեղ բուջեի չափը միակ էական հարցը չէ: Պետական գնումների ազգային շուկայի չափը և գնումների կենտրոնական մարմնին վերապահված պարտականությունների բարդությունը ևս անհրաժեշտ նկատառում է:

Պետական գնումների կենտրոնական մարմնի կողմից իրականացվող գործառնությունների դրական և բացասական կողմերը

Ինչպես ներկայացված է վերը, տարբեր համակարգերում պետական գնումների կենտրոնական մարմինները պատասխանատու են այդ համակարգի կարիքները արտացոլող զանազան գործառնությունների իրականացման համար: Գնումների մարմնի կարգավիճակը պետական վարչակազմում կախված է այն գործառնություններից, որը տվյալ մարմինը պետք է իրականացնի: Այս կապի հետևանքն այն է, որ մարմնի տեղակայման որոշումը իրականում կարող է կայացվել միայն, երբ որոշվել է, թե ինչ գործառնություն է այն իրականացնելու: Եթե այս գործառնությունը պահանջում է, օրինակ, որոշակի աստիճանի անկախություն, ապա գնումների մարմինը պետք է ստեղծվի այնպես, որ նրա անկախությունը ենթադրվի: Եթե դա այդպես չէ, ապա հետագայում մարմնին անկախություն պահանջող որոշակի գործառնությունների վերապահումը հեշտորեն կձախողվի, քանի որ այն ունակ չի լինի իրականացնել այդ գործառնությոը կամ շահագրգիռ կողմերը վստահ չեն լինի դրա ենթադրյալ անկախության մեջ:

Որոշ երկրներում պետական գնումների մարմիններն իրականացնում են համապատասխանության գնահատման գործառնությո՝ նախապես հաստատելով գնումների գործընթացում պատվիրատուների ընդունած որոշումները կամ նույնիսկ նախապես հաստատելով պակաս մրցակցային գնումների ընթացակարգերի կիրառումը: Պետական գնումների կառուցվածքում այս գործառնություններն իրականացնող մեկ կամ մի քանի մարմինների առկայությունը տալիս է դրական արդյունքներ՝ պետական գնումների ընթացակարգերում ձևական անկանոնությունների ռիսկի նվազման առումով: Նման գնահատման արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե ինչպես է սահմանված նախնական (ex ante) աուդիտը և ընթացակարգի որ փուլում է այն կիրառվում:

Օրինակ՝ Լեհաստանում նախնական աուդիտը կիրառվում է գնման ընթացակարգի ավարտից անմիջապես հետո և մինչև պայմանագրի կնքումը: Եթե հայտնաբերվում են անկանոնություններ, աուդիտ իրականացնող մարմինը հայտնում է դրանց և դրանք ուղղելու միջոցների մասին իր կարծիքը պատվիրատուին: Այնուամենայնիվ, գնման ընթացակարգը կիրառելի կանոնների համապատասխան իրականացնելու միակ պատասխանատուն պատվիրատուն է:

Այնուամենայնիվ, փորձը ցույց է տվել, որ նման իրավասության բացասական հետևանքները գերակշռում են և որպես արդյունք՝ չեղարկում են անկանոնությունների ռիսկի սահմանափակման հետ կապված նրանց առավելությունը: Նախնական հաստատումը պետական գնումների գործընթացի լրացուցիչ քայլ է, և հետևաբար այն բացասաբար է ազդում արդյունավետության և այդ գործընթացի տևողության վրա: Քանի որ գնումների արդյունավետ համակարգի նպատակներից մեկը ոչ անհրաժեշտ վարչական քայլերի վերացումն է, վարչական բեռը ծանրացնող համապատասխանության գնահատման մեխանիզմների պարտադրումը պետք է խորապես ուսումնասիրվի: Նման մեխանիզմները պետք է

սահմանվեն սահմանափակ կարգով, որպեսզի նրանց բացասական ազդեցությունը չգերազանցի նրանց դրական ազդեցությանը:

Ավելին, համապատասխանության գնահատման գործառնությունները, հատկապես նրանք, որոնք պետական գնումների կենտրոնական մարմիններին լիազորում են նախապես հաստատել պակաս մրցակցային ընթացակարգերի կիրառումը, բարձրացնում են նաև գնման գործընթացի պատկանելիության և դրա համար պատասխանատվության հարցը: Նման գործառնությունների իրականացումը կարող է հանգեցնել որոշակի գնման գործընթացների համար պատվիրատուների պատկանելիության աստիճանի նվազեցման ու պատասխանատվության թուլացման և պատասխանատվությունը նման հսկողություն իրականացնող մարմիններին փոխանցման: Այս հարցը իրենից հատուկ կարևորություն է ներկայացնում այլ մարմինների իրավատվությունների լույսի ներքո, հատկապես՝ վերանայման և աուդիտի մարմինների, որոնք հիմնադրվել են՝ պետական գնումներում անկանոնությունների վերանայման, հայտնաբերման և ուղղման նպատակով:

Այս հարցերն այնուհետև ընդգծվում են պետական գնումների կենտրոնական կառույցների սահմանափակ վարչական կարողությունները հսկվող պայմանագրերի քանակի հետ համեմատելու համատեքստում, ինչպես նաև այս կառույցների խորհրդատուների կարողությունների համատեքստում, հատկապես՝ տեխնիկական և գործառնության մասնագրերի հետ կապված՝ հաշվի առնելով պատվիրատուների կողմից գնվող զանազան առարկաների խոշոր քանակը:

Ինչ վերաբերում է բացասական ազդեցությանը, որոշ երկրներում լավագույն փորձը կապված է համապատասխանության գնահատման գործառնության սահմանափակման և պատահական կիրառման հետ, ինչը սահմանափակվում է այն գնման ընթացակարգերով, որոնք ընտրվում են՝ հիմք ընդունելով նրանց արժեքը և կարևորությունը, կամ որոշ պատվիրատուներով, հիմք ընդունելով, օրինակ՝ ռիսկի գնահատման արդյունքները:

Կան օրինակներ, երբ պետական գնումների կենտրոնական մարմիններն ունեն համապատասխանության գնահատման հատուկ և լրացուցիչ գործառնություն, որը վերաբերում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող պայմանագրերին, ինչպիսին է օրինակ՝ միայն ԵՄ ֆոնդերով համաֆինանսավորվող պայմանագրերի նկատմամբ հսկողական գործառնությունները, այս պայմանագրերի շնորհիվ հսկող առանձին բաժնի առկայությունը կամ ԵՄ ֆոնդերով համաֆինանսավորվող, ԵՄ շեմը գերազանցող բոլոր պայմանագրերի նախնական աուդիտը:

Խորհրդատվական գործառնությունները սահմանվում են պատվիրատուներին և տնտեսավարող սուբյեկտներին իրենց համապատասխան պարտականությունների իրականացման հարցում օժանդակելու համար՝ նրանց հնարավորություն տալով գործել արդյունավետ և ազգային օրենսդրությանը, ԵՄ Պայմանագրի հիմնարար սկզբունքներին ու լավագույն փորձին համապատասխան: Հատկապես բարեփոխումների նախնական փուլերում օժանդակման պահանջով պայմանավորված՝ իրավական դաշտի կիրառման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրող մարմնի գոյությունը չափազանց կարևոր է: Այնուամենայնիվ, բարեփոխումներ իրականացնող շատ երկրներում, և հատկապես այն երկրներում որոնք ունեն ավելի կենտրոնացված կառավարման պատմություն, պետական գնումների մարմինները դիտվում և կիրառվում են որպես հսկողության օժանդակ

մեխանիզմներ և ոչ թե բարեփոխումների և զարգացման խթաններ: Չնայած նման մոտեցումն ունի ակնհայտ օգուտներ, այն երկրներում, որոնք ունեն լայնածավալ վարչական կարողություններ պահանջող հսկողական գործառույթներ իրականացնող գնումների մարմիններ, հավանական հետևանքը պետական գնումների համակարգում լրացուցիչ, ավելորդ խստության ներմուծումն է և բարեփոխումների գործընթացի արդյունավետության դանդաղեցումն ու նվազեցումը: Որպես նման օժանդակ հսկողական մեխանիզմների իրականացման արդյունք՝ պետական գնումների մարմինները հաճախ չեն գիտակցում մոնիտորինգի գործառույթի օգուտները, որն իրականացվում է որպես վիճակագրական և ամբողջ համակարգի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և համակարգային խնդիրների ոլորտներն ու միտումները բացահայտելու մեխանիզմ:

Ի լրումն՝ նման հսկողական գործառույթը կարող է հակասել ցանկացած այլ խորհրդատվական գործառույթի, որը ևս կարող է շնորհիվ լինել պետական գնումների մարմին: Այս երկու գործառույթները միևնույն մարմնին վերապահված լինելու հնարավորությունը պետական գնումների մարմնի պատշաճ տեղակայման և անկախության վերաբերյալ մտահոգության տեղիք է տալիս:

Առավելությունների և թերությունների գնահատումը կարևոր է՝ թվարկած այլ գործառույթների գործողության ոլորտը սահմանելու համար, ինչպիսին է օրինակ՝ մրցութային փաստաթղթերի ստանդարտացումը: Պայմանագրերի զանազան տեսակների (ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ) և գնման առարկաների համար մրցութային փաստաթղթերի ստանդարտացումը կամ ստանդարտ պայմանագրային դրույթները կարող են ընդհանուր առմամբ նվազեցնել պայմանագրերի շնորհման ընթացակարգում կամ պայմանագրի կատարման ընթացքում անկանոնությունների ռիսկը: Այնուամենայնիվ, պարտադիր ստանդարտ փաստաթղթերի սահմանումը՝ առանց առանձին պայմանագրերի հատուկ պայմանները և պատվիրատուների կարիքները բավարարելու կամ պայմանագրին վերաբերող այլ գործոնների պատճառով դրանցում փոփոխություններ կատարելու ճկունության, հաճախ հանգեցնում է առանձին գնման ընթացակարգի մակարդակում բազմակողմանի գործնական խնդիրների: Այս առումով լավագույն փորձի օրինակները նախատեսում են ստանդարտ փաստաթղթերը ոչ թե որպես ամբողջապես կամ մասնակի պարտադիր տարր, այլ որպես պատվիրատուների համար ուղղորդող գործիքի տեսակ, որը մշակվել և տրամադրվել է պետական գնումների կենտրոնական մարմնի կողմից:

Կեղծ տեղեկություններ ներկայացրած, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարած կամ պետական գնումների կանոնները խախտած տնտեսվարող սուբյեկտների պաշտոնական սև ցուցակների վարմանը վերաբերող պետական գնումների կենտրոնական մարմինների գործառույթը գործնական տեսակետից մի շարք հարցեր է առաջացնում: Չնայած նմանատիպ ցուցակները բարձր են գնահատվում պատվիրատուների, մասնակիցների և հասարակության կողմից՝ որպես թափանցիկությանը նպաստող տարր, պաշտոնական սև ցուցակների վարումը խորհուրդ չի տրվում: Այս ցուցակները պետք է արմատականորեն փոխվեն կամ չեղարկվեն՝ հատկապես Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի՝ վերջերս քննած C-465/11 գործի լույսի ներքո: Սև ցուցակներին վերաբերող մի քանի բաց հարցեր, ինչպիսիք են սև ցուցակում ներառելու համար համապատասխան ապացույցների տրամադրման իրավական կողմը կամ սև ցուցակում ներառված կազմակերպությունների համար

իրավական պաշտպանության հասանելիությունը պետք է հանգամանալից ուսումնասիրվեն: Սև ցուցակում որոշակի տնտեսվարող սուբյեկտի ներառելուն նախորդող բոլոր վարչական ընթացակարգերն իրականացնելու համար առկա կարողությունների պակասը՝ նման որոշման բողոքարկման հետ կապված իրավական ռիսկերի համակցությամբ, բարձրացնում են պետական գնումների համակարգերում սև ցուցակների կիրառման դրական ազդեցության առկայության կարևոր հարցը:

Հետագա ընթերցանություն.

- [Եվրոպական Միության Անդամ երկրներում Պետական Գնումների Կենտրոնական Կառույցները և Կարողությունները](#) (SIGMA փաստաթուղթ No. 40, 2007թ.);
- [Պետական Գնումների Մոնիտորինգ](#) (Պետական Գնումների Համառոտագիր 27, Հունիս 2013).